ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«Էջմիածին» ամսագրի էջերում սրտագին ուրախությամբ ենք հրատարակում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարազատ ու հավատարիմ այն զավակների անունները, որոնցից ոմանք իրենց երկարամյա ազգօգուտ և եկեղեցանվեր գործունեության և հասարակական աշխատանքների, ուրիշներ՝ իրենց եկեղեցանվեր սրտարուխ և առատաձեռն պարգևների համար, ի նշան ճշմարիտ գնահատանքի և սիրո, արժանացել են Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ուշադրության և պարգևատրվել են հունիսի 14-ի հայրապետական սրբատառ կոնդակով և Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով։

Հայրապետական այս բարձր գնահատության արժանացողներից ոմանք իրենց գործունեությամբ անձամբ ևս ծանոթ են Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին, վերջերս արտասահմանում կատարած Իր հովվապետական այցելության ժամանակից։ Ուրիշները պարգևատրվել են թեմական սրբազան առաջնորդների բարեխոսությամբ և միջնորդությամբ։

Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով պարգևատրվել են.

Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի միջնորդությամբ՝

ՏԻԱՐ ՀՐԱՆՏ ՆԱՍԻՊՅԱՆ, ատենապետ Կահիրեի Քաղաքական ժողովի և բարեբար Մայր Աթոռի.

ՏԻԱՐ ՄԱՐՏԻԿ ԶԱՐՊՀԱՆԵԼՅԱՆ, ատենապետ Ալեքսանդրիայի Քաղաքական ժողովի.

ՄԵԹՐ ԳԵՎՈՐԳ ՔԱՅԱՐՅԱՆ, ատենապետ Ալեքսանդրիայի Թեմական ժողովի.

ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՊԵՏԵՎՅԱՆ, ատենադպիր Կահիրեի Թեմական ժողովի.

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԶԱՐԵՀ ՍԱԳԱՅԱՆ, ազգային բարեբարներ.

ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՇԱԼՃՅԱՆ, անդամ Կահիրեի Թեմական ժողովի.

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անձնական գնահատանքով՝

ՏԻԱՐ ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ (Լոնդոն), բարեբար Մայր Աթոռի.

ՏԻԱՐ ՄԱՐԳՈ ՊԱՔՐՃՅԱՆ (Մանչեստր), բարեբար Մայր Աթոռի.

Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի միջնորդությամբ՝

ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՍՄՍԱՐՅԱՆ, Թեմական խորհրդի անդամ.

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՀԵՐԻ ԹԱԹՈՍՅԱՆ, ազգային բարեբարներ.

ՏԻԱՐ ՊՈՂՈՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ, ազգային բարեբար.

ՏԻԱՐ ՄՈՎՍԵՍ ՀԵՐԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ, ազգային բարեբար.

Կալիֆորնիայի թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալստյանի միջնորդությամբ՝

ՏԻԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՐՊԵՐՅԱՆ, ազգային բարեբար.

ՏԻԱՐ ԱՌԱՔԵԼ ՅԱՋՐՃՅԱՆ, ազգային բարեբար.

Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝

ՏԻԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՐԹԱ ՏԻԱՐՊԵՔԻՐՅԱՆ, ազգային բարեբարներ.

ՏԻԱՐ ԱՐՄԵՆ ՊԵՐԿԱՄԱԼԻ, ազգային բարեբար։

Հայրապետական օրհնության կոնդակի են արժանացել.

ՏԻԱՐ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆ (Միլանո, Իտալիա), բարերար Մայր Աթոռի.

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ (Լոնդոն, Անգլիա), բարերար Մայր Աթոռի.

ՏԻԱՐ ՕՆՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Կամո, Իտալիա), բարերար Մայր Աթոռի։

Ավագ քահանայության պատվին են արժանացել.

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հուլիսի 5-ի և 25-ի սրբատառ կոնդակներով, քահանայական երկարամյա և օգտակար գործունեության համար.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ (Լենինական), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՔԵԼԱՄՅԱՆ (Լենինական), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ (Մայր Աթոռ), լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ.

Քահանայական լանջախաչի տվչություն.

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հունիսի 20-ի և հուլիսի 25-ի սրբատառ կոնդակներով, եկեղեցական անբասիր և արդյունաշատ գործունեության համար, ի նշան գնահատանքի և քաջալերանքի, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհված՝ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱ ՇԻՐԻՆՅԱՆԻՆ (Երևանի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ).

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՍԵՓ ՔԱՀԱՆԱ ՔՅՈՍԵՅԱՆԻՆ (Երևանի Ս. Սարգիս եկեղեցու ավագերեց).

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (Մայր Տաճարի դասապետ).

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՐՏԱՇԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (Աստրախան), թեմական առաջնորդի և եկեղեցական խորհրդի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ՏՈՒՎԱՐՃՅԱՆԻՆ (Ստալին քաղաք, Բուլղարիա), եկեղեցական վարչության և թեմական խորհրդի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (Մանչեստր), եկեղեցու հոգաբարձության միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂՆԻԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ (Սան-Պաուլո, Մոնտեվիդեո), Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ, գերապատիվ, Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ պարգևատրվեց կամիլավկայով։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հուլիսի 27-ին հայրապետական օրհնության կոնդակ շնորհեց Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ նրա քահանայական գործունեության 55-ամյա և առաջնորդական տեղապահության 45-ամյա հոբելյանի կապակցությամբ։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է հայրապետական բարձր գնահատության արժանացողներին և մաղթում բոլորին ավելի արդյունավետ աղդային եկեղեցական, հասարակական գործունեություն ի պայծառություն մեր Ս. Եկեղեցուն և ի մխիթարություն հավատացյալ ժողովրդին։